№ 7 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 4

1895
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 4 № 7

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաց նամակ աշակերտուհի Թագուհի Վարդանեանին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական շահերի նկատմամբ անաչառ գործունէութիւն է հարկաւոր. Նամակ Ռաշտից. Նամակ Դավրէժից. Նամակ Արտաբիլից. Նամակ Խմբագրութեան։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ինտելիգենտները։

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ

—

Սիրելի Թագուհի!

Կարդացի քո գրած նամակը «Շաւղի» մէջ. իսկ թէ ո՞րպիսի խորը կերպով խոցեց սիրտս քո այդ պաղատագին դիմումը Թէհրանի հայերին՝ վերաբացելու համար տեղւոյդ փակուած դպրոցը, կըրկնում եմ, թէ ո՞ր աստիճան ի սրտէ խորը վշտացայ—չեմ կարող նկարագրել... Իսկ թէ ո՞ր աստիճան անզգայ են ձեր ծնողները, սիրելիս, այդ ցոյց է տալիս քո նամակը կարդալուց յետոյ շարունակվող անտարբերութիւնը և օրիորդաց դպրոցիդ խափան դրութիւնը։ Անշուշտ, սիրելիս, ինձ հետ և դուք, աշակերտուհիներդ, կը յիշէք այն, թէև կարճ, սակայն քաղցրիկ օրերը, երբ տեղւոյդ օրիորդաց դպրոցը այն նախանձելի դրութեան էր հասել, որ նոյն իսկ տարաւայ վերջին բողոքական ընտանիքներ իրանց զաւակներին դուրս կորզելով միսիոնարների բթացնող մթնոլորտից՝ ուղարկում էին մեր դպրոցը։—Այդ՝ Թէհրանում մի չը տեսնուած բան էր, բայց իրականութիւն է։ Ո՞վ էր մեղաւոր արդեօք, որ դպրոցդ փոխանակ յառաջադիմելու՝ յետադիմեց և մահուան դատապարտուեց։ Ես մեղադրում եմ նախ՝ դպրոցիդ այն ինքնակոչ ղեկավարներին, որոնք փառքից կուրացած՝ ուզում էին դպրոցը սեփականել, որ և իրանց անտակտութեամբ՝ ժողովրդի զզուանքը շարժեցին՝ թէ դէպ իրենց և թէ դէպ այն հիմնարկութիւնը, որ գըտնվում էր իրենց ձեռքում։ Բայց, սրանից աւելի մեղաւոր և դատապարտելի էր Թէհրանի ժողովուրդը, որ ազգային հիմնարկութիւնների վրայ խնամիական հայեացքներով է նայում։ Նա զզւելով անհատներից, փոխանակ նրանց դուրս մղելու և ազգային հիմնարկութիւնները ազատելու այդ փչացած տարրից, ինքն է հեռանում և իր զաւակների զրկանքին պատճառ դառնում։ Արդեօք ամաչում են տեղոյդ, կրքերից կուրացած այն երկու խմբերը, որոնք միմեանց միս կրծելով՝ առիթ դարձան դպրոցիդ փակման և արժանացան այսօր մի քանի տասնեակ մանուկների հրապարակային արտասուալից կշտամբանքներին... Արդեօք՝ նրանց երեսները կարմրեցին ձեր մանկական թաթիկներով հրապարակապէս տուած ապտակներից։ Հա, եթէ նրանք իսկապէս կարմրելու ընդունակութիւն ունենան, եթէ նրանց մէջ մեռած չը լինի մարդկային զգացմունքը ձեր այդ հրապարակային թախանձանքներից յետոյ՝ այլ ևս անտարբեր չեն մնալ, կզգացուին և աւելի բուռն ճիգերով կաշխատեն վերաբանալ ձեր դպրոցը և թոյլ չը տալ, որ դուք ընկնելով միսիոնարների և ժեզուիտների ուռկանները՝ հոգով ու մարմնով կորսուիք...

Շարունակիր, սիրելիս, քո միւս բոլոր ընկերուհիներիդ հետ ձեր արդար պահանջը, պահանջ մտաւոր և բարոյական սնունդի, իսկ եթէ Թէհրանի հայերը դարձեալ կը շարունակեն իրենց մեռելային անտարբերութիւնը, եթէ դպրոցիդ դռները դարձեալ փակ կը մնան, ապագան նրանց երեսին կը տայ՝ ոչ թէ ձեր մանկական թաթիկների քնքոյշ ապտակների նմանը, այլ աւելի ուժգին հարուած—ամօթի և նախատինքի ապտակը...

Իմ սիրալիր բարևներս տուր Իւղաբերին և միւս բոլոր ընկերուհիներիդ։

Ձեր. տիկ. Օ. Ղազարեանց

Դավրէժ 18 փետր. 95

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԻՆՏԵԼԻԳԵՆՏՆԵՐԸ

—

Ինտելիգենտ է նա, որն ունի ազնիւ, զգայուն սիրտ և զարգացած խելք. որը, ստամոքսային և սեպհական կաշի շահերից բարձրացել, մոռացած իր եսը, զգում է մարդկութեան թշուառութիւնն ու ցաւը և միշտ ու անդադար մտածում ու աշխատում էմիջոցներ գըտնել վերացնելու այն ամենը, ինչ մարդկային կեանքը զրկանքի ու նեղութիւնների մի ցանց է շինել, մի անելանելի ճահիճ....։ Այդպիսի մարդը ստրուկն է իր լաւ զգացմունքների, և եղբօր դրութիւնը լաւացնելու ու թեթևացնելու համար զոհում է իր հանգստութիւնը և կեանքը նոյն իսկ...։ Ինտելիգենտ մարդու խօսքն ու գործը ներդաշնակ են, արդար ու ազնիւ. նա լեզուն երբէք չի ծառայեցնում մտքերը ծածկելու համար, այլ, սրտի ազնիւ զգացումները և գլխի օգտաւէտ մտածութիւնները արտայայտելու. նա չի կեղծում, չի քծնում, զօրեղի առաջ վիզը չի ծռում և թոյլին ճնշում. ո՛չ, նա միշտ թոյլի և արդարի կողմն է. ուժեղին համարձակ ասում է նրա անիրաւութիւնը, յանդիմանում ու սովորեցնում էարդարամտութեան. խեղճին, թոյլին օգնում, սովորեցնում և մխիթարում... Ինտելիգենտ մարդը տասնապատիկ, հազարապատիկ շատ է տալիս հասարակութեան, մարդկութեան, քան նրանից պահանջում ու ստանում. նա իր բաւականութիւնն ու երջանկութիւնը չի գտնում քէֆերում, խնջոյքներում, ուտել խմելում, փափուկ և փարթամ կենցաղավարութեան մէջ. օպերայի կիսամերկ և բալետի մերկ կանայք չեն նրա մտածութեան առարկան, քանի որ մարդկութեան ստուարագոյն մեծամասնութիւնը քաղցած ծարաւ ու կիսամերկ է, ծանրաբեռնուած տաժանելի հոգս ու աշխատանքով, տանջուած է ու մաշուած..... Նա, բաւականութիւնների ետևից չի էլ ընկնում իսկի, այլ ազնիւ լինելով, բաւականութիւնն էլ գըտնում է իր արած ազնիւ գործերում,—թշուառ եղբօր արցունքը սրբելու մէջ.... Այո՛, ինտելիգենտ մարդը, անկեղծ է, ազնիւ, խելօք, չը յարմարուող հանգամանքների հետ իր շահերի համաձայն. նրա խիղճը երբէք չի քնում ու չի մեռնում քանի նա կենդանի է. նա ստրուկն է իր ազնիւ զգացմունքների և մտածողութեանց և այդ յատկութիւնները շատ ու շատ անգամ տանում են նրան դէպի բանդ ու գնդան, խարոյկ ու կախաղան, որոնցից նա բնաւ չի վախենում, որոնց նա արհամարում է, որոնց, իսկապէս ասած, նա չի էլ զգում, այնքան կենտրոնացած է լինում «եղբօր արցունքի» մէջ...։ Իսկ դո՞ւ, որ ստրուկն ես քո անասնական կոպիտ զգացմանց և նրանց յագեցնելու համար պատրաստ ես ամեն բոպէ և՛ քրծնել և՛ ոտրկանալ, և՛ սպասաւորել և՛ լրտեսել, հնարել ու բամբասել, վաճառել և վաճառուել, թաթերի վրայ կանգնել և գլխիվայր մանգալ, առանց սապոնի մարդու սրտի մէջը մտնել. որ օրը հազար գոյն ես փոխում «ըստ հանգամանքի», որ կզզիացել ես քո չնչին եսի մէջ և նրանից դուրս ոչինչ չես տեսնում ու զգում, որ շապկիդ բիծը աւելի հոգս է պատճառում քեզ, քան զերի եղբօրդ թշուառ դրութիւնը, ինչպէս ես յանդգնում քեզ տալ այդ բարձր անունը, և դեռ կարծել ու համարել, որ երբ մէկը արհեստաւոր է, ինտելիգենտ լինել չի կարող. ապա ո՞վ էր քարտաշ Սոկրատէսը, կամ ձկնորս Պետրոսը....

Ահա ճիշտ այն ժամանակ, երբ քո հարազատ եղբայրը—հայ գիւղացին, իր սրտի արիւնով վաստակած կոպէկը ուղարկում է Անգլիա կամ ուրիշ տեղեր, այն տեղերից ստանալու իրան անհրաժեշտ ասեղն ու սղոցը և ուրիշ շատ բաներ, երբ ամեն քայլափոխում և ամենքը օգտուում են այն հանգամանքից, որ նա տգէտ է ու օրէնք չի իմանում, երբ շնորհիւ մեր տնտեսական անկարգ վիճակի, նա զըրկուած է հարկաւոր բարեկեցութիւնից, տանն ու դուրսը փթում է նորանոր հիւանդութիւնների մէջ՝ այդպիսի ժամանակ հայ արհեստագէտ ինժեները, իրաւագէտ փաստաբանը և գիտնական բժիշկը քաղաքներում թափուած, հարուստ հարսնացուներ են որսում, և թողնելով իրենց մասնագիտութիւնը, կնօջ փողերով ապրում են շռայլութեան ու զեղխութեան մէջ և իրանք իրանց ինտելիգենտ ու զարգացած անուանում....

Օպերան, օպերէտը լի են այդպիսի մարդկանցով (այր ու կին). բոլորն էլ հագնուած են մաքուր ու ճոխ, օծուած անուշահոտ իւղերով, փարթամ ու փայլուն, չը նայելով, որ ոչ մի օգտաւէտ բան չեն արտադրում իրանք։ Ներկայացնում են դիցուք «Գեղեցկուհի Հեղինէին»։ Բէմ է դուրս գալիս այդ գեղեցկուհին այնպիսի հագուստով, որի մի կողմը, մինչև գեղեցկուհու ազդրը, կարուած չէ. այնպէս, որ երբ նա դիտմամբ փորը անզգոյշ շարժվում է, երևում են սպիտակ ու մսոտ ոտն ու ազդրը։ Բաց են նոյնպէս գեղեցկուհու պարանոցը, մսոտ կուները, կուրծքը...։ Բացի այդ գե-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՉԱՌ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ Է ՀԱՐԿԱՒՈՐ

—

Մարդկային կեանքը անասնական կեանք չէ, իրական է և նպատակ ունի։

Սկսած ամենայետին ռամկից՝ գիւղացուց, մշակից, արհեստաւորից, վաճառականից մինչև ամենաբարձրը՝ մասնագէտը, խմբագիրը, բանաստեղծը, վիպասանը, ուսուցիչը և այլն... այսպէս թէ այնպէս, իր կեանքի ընթացքում մի որոշ նպատակ ունի, որը իր չափով գիշեր ցերեկ զբաղեցնում է նրա միտքը. նա հետաքրքրվում և շարունակ ձգտում է հասնել դրան, օրըստօրէ իր շուրջը կատարուող բազմատեսակ երևոյթներից, դէպքերից մինը հէնց որ նկատում է իր նպատակին, իր որոշմանը կը ծառայի, առանց յետաձգելու, առանց դանդաղելու քննում է, քրքրում է և վեր առնում կամ ընտրում դրանից այն բաները, որոնք կարող են օգտակար լինել իր որոշմանը։

Կան մարդիկ, որոնք աչքի առաջ ունեն լոկ իրանց անձնական գծուծ շահերը՝ փառասիրութիւնը, անհատական փարթամ կեանքը, անդորրութիւնը և նրան ձեռք բերելու համար չեն խնա-

յում ոչ մի խարդախ, ապօրինի միջոց: Անխտիր, անխնայ պատրաստ են հարստահարելու, շահագործելու իրենց նման տրարածներին, թէկուզ, դրանք մահու չափ ճնշուեն էլ. այդպիսիները աւելի ևս վնասակար են և աւելորդ բեռ մարդկային ընկերութեան համար:

Այսպէս, ուրեմն լոկ անձնական սահմանափակ շահերով զբաղւողները իդէալական ձգտումներ ունեցողներից նկատւում են ընդհանուր հասարակական կեանքի համար որպէս անպէտք անձնաւորութիւններ, իրենց հակաժողովրդական զզուելի կողմերով, վարակիչ փչացնող գործերով. այսպիսիները հանրածանօթ են:

Իսկ ինչ ասել, ինչ անուն տալ այն անձնաւորութիւններին, որ յետին նպատակներով լուսաւորութիւնն իբրև զրահ (ներկայումս մօդայ է) ձախ ձեռքում բռնած, ամբոխի առաջ փայլելու համար, նրա անունով ոգևորված խօսում, պաշտպանում են լոյսն ու գիտութիւնը՝ շեշտելով մատնացոյց անում, թէ դրա մէջն է կայանում ժողովրդի երջանկութիւնը, շահը և փառաւոր ապագան. նոյն անունով պարսաւում են խաւարը, ագիտութիւնը, անտարբերութիւնը, լճացած անշարժ կեանքը, հնամոլութիւնը, նախապաշարմունքը, և, մի քայլ առաջ գնալով, փարիսեցիական արտացաւութեամբ գուշակում նրա անկումը, նրա մահը, եթէ իր այդ յետարգիական քնի մէջ, անզգայ վիճակում մնայ. և ահա, երբ որպէս թարգման ժողովրդի զգացմունքների, պաշտպան նրա արդար դատի, ամբոխի վստահութիւնը շահելով քուէների անհամեմատ առաւելութեամբ ընտրւում, ստանձնում է նրա առաջարկած փափուկ, պատասխանատու պաշտօնը, լինի այդ հոգաբարձութիւն, տեսչութիւն կամ մի այլ պաշտօն, այնուհետև իր աջ ձեռքում բռնած սուր մանգաղով, որը խաւարի իշխանութեան գործիքն է, աջ ու ձախ հնձում է, հաստատ համոզուած լինելով, որ ագէտ ամբոխը շատ չի նշմարել իր գործունէութիւնը. Նրա համար մի և նոյն է թէ այս ինչ ուսուցիչը ինչ մեթօդով է աւանդում ստանձնած դասերը, հաւատարիմ է իր պաշտօնում, հմուտ է իր գործին, արդեօք աշակերտների մէջ յառաջադիմութիւն նկատվում է, նրանց կարիքներին, պահանջներին բաւարարութիւն տրւում է, մի խօսքով, բառի բուն նշանակութեամբ ուսուցիչ է, թէ աչքակապ, թող փչող,—էհ, այդ բոլորը նրա համար մի և նոյն է, միայն թէ իր հլու փառաբանողներից վատամարդ չը նկատուի, գլուխը քարին, թէկուզ ժողովուրդն է տուժում, ժողովուրդն է վնասւում, միթէ չարժէ այսպիսիներին, աշխարհի որ կողմն էլ գտնուեն, անուանել փարիսեցիներ, երբ ժողովրդի վստահութիւնը ի չարն են գործ դնում:

Կրկնում ենք. վաղուց արդէն ընդունուած, ճանաչուած, մի փաստ է ժողովրդի շահերով տոգորուած անխարդախ մարդկանց շրջանում, հաստատ սկզբունքներով լոյսի և գիտութեան զրահով զինուած, խաւարի և մթութեան դէմ կռւող մարդկային յառաջադիմութեան արտայայտիչը լինող օրգաններում, խաւարի որդոց մթութեան մէջ գործած վնասակար արարքները լոյս աշխարհ դուրս բերել, որ հասարակութիւնը նրանց ճանաչելով, մի անգամ ընդ միշտ երես թեքի:

Հեշտ չէ այս գործը. Հարկաւոր է խորին հմտութիւն և, անաչառ, անկողմնակալ քննութիւն, և իրական փաստեր, որ չարի պատճառով թացն էլ չայրուի. Հեշտ չէ, մանաւանդ պարսկաստանի ժողովրդի մէջ, մի ժողովուրդ, դեռ որի գործերը ղեկավարւումէ աղալական դասակարգի ձեռքով՝ աւանդական սովորութիւններով, որը խելքն ու հանճարը վերագրում է միայն նոյն դասակարգին, համոզուած լինելով, որ առանց այդ գերագոյն քանքարի չէին կարող հարստանալ և հենց այս է պատճառը, որ դարերով ժողովրդից փառաբանուողները, յարգանք վայելողները այսօր խորթ աչքով են նայում «Շաւիղում» հրատարակուած ճշմարտութիւնների վերայ խոժոռ ակնարկ ձգում իրանց կեղտը բացողին. բայց այսուամենայնիւ, քաղաքական պարտք է ընկնում Պարսկաստանի բոլոր կողմերը գտնուող հասարակական շահերը ի նկատի առնող ինտելիգենցիայի վրայ, խնամական կապերը մի կողմ ձգելով, դրանց գործերը հրապարակ հանել, մամուլի մէջ կրիտիկայի ենթարկել, որ եթէ կարելի է, ուղղեն, իսկ եթէ ոչ, յետ քաշուելով ասպարէզը թողնեն իրանցից աւելի անաչառ, կարող և ընդունակ անձանց:

Ա.

Դավրէժ

ՆԱՄԱԿ ՌԱՇՏԻՑ

18 փետր. 95

Փետրվար 9-ին ,Վարդանանց տօնին, ինչպէս և ամէն տեղ սովորութիւն է, նոյնպէս և տեղոյս եկեղեցում պատարագ մատուցին և հոգեհանգիստ կատարուեց ի յիշատակ Վարդանանց: «Հայրմարի» ժամանակ պատարագիչ քահանան քարոզ խօսեց, որը վերաբերվում էր Վարդանանց պատերազմին և Սասնոյ սովեալներին: Պատարագը վերջանալուց յետոյ եկեղեցական դասը երգեցիկ խմբի հետ «Նորահրաշ» շարականը երգելով եկեղեցուց ուսումնարան գնացին, որտեղ արդէն պատրաստուած էր հանդիսի համար: Հանդիսի ժամանակ աշակերտները և աշակերտուհիները բեմի վրայից երգում և ոտանաւորներ էին խօսում, որոնք վերաբերվում էին Վարդանանց: Ոտանաւորները վերջանալուց յետոյ ուսուցչուհի Տիկին Հռիփսիմէն խօսեց մի ճառ. Թէպ[էտ] ճառը բաղկացած էր լաւ նիւթերից բայց ափսո[ս] դուր անցաւ. հանդիսականներից շատերը չ'հա[ս]կացան ոչինչ: Ամենից վերջը խօսեց ուսուց[իչ] Սողոմոնեանցը: Ճառը բաւականաչա[փ] մշակուած և ազդու էր, և վերաբերւում [էր] դարձեալ Հայերիս վիճակին:

Նոյն երեկոյեան տեղոյս Թատերասիր[աց] ընկերութիւնը ներկայացրեց Վարդանանց պա[տ]երազմի ողբերգութիւնը և «Երեք քաջեր» կատակերգութիւնը, որի օգուտը յատկացու[ած] Սասնոյ սովեալներին:

Չնայելով տեղի անյարմարութեանը, բաւա[կան] յաջող անցաւ ներկայացումը: Դահլիճ[ը] լիքն էր բազմութեամբ, որոնց մեծագոյն մա[սը] գրեթէ օտարականներ և օտարազգիներէ[ին] տեղացիներից շատ քիչերն էին երևում:

Նոյնպէս ներկայ չէին մեր հարուստներ[ը] և առևտրականները որոնք խանութ բացած առևտուր էին անում:

Չնայելով երախտագիտութեան ջանքերին [և] նեղութեանը. մեր հասարակութիւնը շա[տ] սառն է վերաբերւում այս և այսպիսի շա[տ] հասարակական գործերի:

Երկրորդ գիշերը նոյնը ներկայացրին [...] կանանց համար: Համեմատելով, կանայք մարդ[...]կանցից աւելի էին. միայն պակաս էին վե[ր]յիշած մի խումբ մարդկանց ընտանիքը:

Անտրակտներին նուագում էր երաժշտական խումբը:

Զուտ օգուտը կ'համարուի մօտ 50 թուման:

Լսում ենք որ Թատերասիրաց ընկերութիւնը կամենում է մօտերումս մի պարսկերէն ներկայացում տալ յատկապէս պարսիկների համար. ցանկանում ենք յաջողութիւն:

Ս. Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

19 փետր. 95

Ամսոյս 17-ին յայտարարութիւն էին ցրել, որով կանանց հրաւիրում էին գալ Ղալի Թաղի օրիորդաց դպրոցը, երեկոյեան երեք ժամ[ին] մնացած: Մի խումբ կանայք մտադրութիւն

ղեցկուհին, բեմ են գալիս և ուրիշ շատ կանայք խմբովին, որոնց դերն է իրանց կիսամերկ ճոխ մարմնով գրգռել մարդկանց, այդ պարապ մարդկանց անասնական կրքերը.... Բոլորը արբած են և ամբողջ հոգով ու մարմնով աչք դարձած, ակնապիշ՝ նայում են.... Մարդիկ ու կանայք ցրվում են օպերայից, բաւականութիւն տալու իրանց անասնական գրգռուած կրքերին. վաճառում են, վաճառվում են, մոռացած աշխարհի ցաւն ու հոգսեր և իրանք աղբիւր դառնում շատ մաշող ցաւերի: Բայց երբ Կաթուղիկոս է գալիս, կամ Արծրունին մեռնում՝ «ինտելիգենտները» են գռռում:

Իսկ նրանց լառ ժողովուրդը չը հասկանալով նրանց լեզուն, շարունակում է գիշեր ու ցերեկ տնքալ և թոյլ տալ, որ իր դժոխային աշխատանքի արդիւնքը խժռեն այդ խոզերը. խոզեր, որոնց ձեռքին եկեղեցին, ժողովրդի կրթարանը անկելանոց է դարձել, ձրիակերների բուն. կլուբը—խորհրդատեղին, կարտ խաղացողների որջ. բեմը,—ճոխ և վաճառւող մարմինների շուեմարան...

Եւ այդ տեղերում տասնեակ հազարներ են կուլ գնում, ճիշտ այն ժամանակ, երբ նրանց, այդ հազարների իսկական աշխատողները, ճնշուած հազար նեղութիւնների տակ, աշխատանքի շատութիւնից քիթ սրբելու ժամանակ չունեն. որոնց կեանքը տանջանք է. որոնք մեռնում են միջին թւով 30 տարեկանում, առանց ճաշակելու մի որ և է քաղցրութիւն կեանքի... որոնք լաւ օրում միշտ մոռացած են և մոռացվում են, երբ նրանց արիւնը ծծելու կարիք կայ......

Ժողովուրդը իր առաւելութիւնների հետ ունի այն դժբաղդ, ճակատագրական կործանիչ պակասութիւնը, որ եթէ հաւատում է կամ չէ, եթէ սիրում է կամ ատում, կուրօրէն է անում: Լսել է, որ առաջին մօգպետը իր կեանքը վարել է ազնուութեամբ, և ահա, հէնց այդ հասարակ բանը պատճառ է դառնում և նա կուրօրէն հաւատում է, որ բոլոր մօգերը մաքուր, ազնիւ մարդիկ են: Հազար տարիներ նրա աչքի առաջ մօգութիւնը հազարաւոր գործեր է բռնում մէկը քան միւսը հրէշաւոր, բայց նա չի տեսնում, չի հաւատում, իր եղձիրը խաբուած տեսնել չի ցանկանում և վա՜յ է այն զգայուն մարդուն որ փորձում է նրա աչքերը բաց անել և ասել. «տես թէ ինչ են դրանց գործերը և մի հաւատա դիրքին ու անուան»....

Վերջապէս, հազարաւոր զոհեր ընկնելուց յետոյ, դարերի ընթացքում, մի կերպ նա ըսկսում է ձեռք վերցնել դէպի մօգութիւնն ունեցած իր կոյր հաւատից. բայց ընդհանրապէս կուրութիւնից, երբէք: Իր յոյսերը մի տեղ փշրուած տեսնելով, նա աշխատում է իր իդէալը մի ուրիշ տեղ գտնել, մի ուրիշին հաւատալ. որովհետև, ծուլանում է միշտ և հանապազ արթուն մնալ, քննել ու քննել մարդկանց գործերը...: Մօգութեան տեղը բռնում է դիցուք կղերականութիւնը, որի սև գործերից չը սարսափել անկարելի է. Նրան ուզում է յաջորդել մեր ժամանակուայ «ինտելիգենտը», որը արդէն բաւականաչափ հաւատացրել է, որ երբ մարդը ուսում ունի, ազնիւ է: Նրա ասածը շատ անգամ անկեղծ, միամիտ մարդիկ կրկնում են, չը հասկանալով թէ ինչ են անում: Ահա մի յայտնի ժամանակամիջոցում մինը միւսի ետևից երևան են գալիս վէպեր, վէպիկներ, հեքեաթներ, խոշոր տառերով առաջնորդող յօդուածներ և այլն, որոնց մէջ պարոն յօրինողները բարձր ուսում ստացած մարդկանց «հերոս» են դուրս բերում, հերոս, որի մէջ դրել են այդ խեղճ երևակայողները, այն ամենը, ինչ իրանք կը ցանկանային որ լինէր....:

Նրանք չեն ուսումնասիրում կեանքը և այն առարկան, որի մասին խօսում են, այլ նկարագրում են իրանց իդէալին, իրանց հրեշտակին և շատ անգամ այնպիսի անկեղծ, բուռն զգացմունքով, որ դիւրահաւատ և անփորձ ընթերցողը կախարդվում է, հաւատում և իրերին նայում նրա (գրողի) աչքերով: Ինչ ասել կուզէ, որ հին կուռքը այդ բոլորի մէջ առաջինի հակապատկերն է կազմում և գրողը ֆանատիկոսի մոլեռանդութեամբ պախարակում և մտրակում է նրան ամեն կողմից....

Վերջի վերջոյ կուռքը փշրվում է, կռապաշտութիւնը ոչ. ձևերը փոխվում են, փոխվում է երգի եղանակը, բայց բովանդակութիւնը մնում է նոյնը, և ժողովրդի այդ թուլութիւնից ախորժակով օգտուողներ գտնվում են շատ մեծ թւով և ամեն ժամանակ: Այդպէս եղել է գոնեա մինչև այժմ, տայ Աստուած, որ մեր որդիքը աւելի խելացի լինեն և ամեն կերպ ընդունակ իրանց բաղդը իրանց ձեռքում պահելու... որ մեզ նման, ինչպէս Շչեդրինն է ասում, «կոճղեր» չը լինեն, որոնց վրայ դժբաղդութիւն կամ բաղդաւորութիւն՝ թափվում են առանց իրանց կամքի, ցանկութեան և գիտութեան: Տայ Աստուած, որ նրանք իրանք լինեն իրենց բաղդի ստեղծողը և դժբաղդութիւնները չը համարձակուեն թափուել նրանց գլխին, որպէս անշունչ կոճղի վրայ թափվում են անձրեն ու ձիւնը ըստ իրենց քմահաճութեան:

(Կը շարունակուի)

ունեն իրանց մէջ մի ընկերութիւն կազմել, որոնց նպատակն է մի սենեակ վարձել, մի վարժուհի բռնել, ուսումնարանից դուրս եկած աշակերտուհիներին այդտեղ ժողովել կար ու ձև և կերակուրներ եփել սովորեցնել. այդ պատճառով երեկ ժողով ունէին: Ժողովում ամենից առաջ ընտրել են 7 հոգաբարձուհիներ, որոնք պիտի աշխատեն ընկերութեան նպատակն իրանց կարողութեան չափ առաջ տանել և օրէ օր անդամների թիւը շատացնել:

Ով որ անդամ է գրվում, առաջին տարին պէտք է 30 ռուբլի տայ, իսկ նրանից յետոյ տարէն 20 ռուբլի. երեկուայ ժողովում մօտաւորապէս 140 թուման փող են ժողովել:

Որոշել են տարեկան 4 անգամ ներկայացում տալ յօգուտ սոյն ընկերութեան: Սրանց նպատակը, ի հարկէ շատ գովելի է եթէ կարողանան գործել. կ'ցանկանք բարի յաջողութիւն, որ իրանց նպատակն առաջ տանեն:

Մ. Աղասեանց

ՆԱՄԱԿ ԱՐՏԱԲԻԼԻՑ

—

16 փետր. 95

Տեղւոյս Նորընտիր հոգաբարձուները որոնք չորս հոգի են՝ Ա. Խաչիկեանց Յ. Էլչիբէկեանց Հ. Մ. Մնացականեանց և Ս. Եգանեանց, պէտք է ասել, որ մեծ եռանդով են գործում. ամեն ինչ վերականգնում է. միայն երկու անհրաժեշտութիւն կայ որ անուշադիրեն թողած. առաջինը քահանայ, որ ամենահարկաւորն է որովհետև հարիւրամեայ զառամեալ քահանան ոչինչ չի կարողանում անել:

Իսկ երկրորդը.պատուելի հոգաբարձուները, որ անխոնջ աշխատում են օգուտ ուսումնարանի՝ արդեօք լաւ չէր լինել որ մի փոքր էլ ուշադրութիւն դարձնէին տեղոյս ընթերցարանի վրայ: Քանի տարի սրանից առաջ մի խումբ տեղացի և օտարական երիտասարդներ անդամակցութիւն կազմելով, հիմնեցին մի ընթերցարան, բերել տալով զանազան գրքեր մօտաւորապէս 200 կտոր. հիմնեցին մի բէմ, շատ գեղեցիկ. կարծեօք 2—3 անգամ ներկայացում տուին—որը շատ յաջող և շահաւէտ անցկացաւ—այժմ ոչ մի ուշադրութիւն չի դարձնվում ոչ գրադարանի և ոչ բէմի վրայ, գրքերը ցրուած,պատռոտած.բէմը այրիացած: Լաւ չի՞ լինիլ փոխանակ կոպէկների հետևից ընկնելը, տարեկան հէնց երկու անգամ ներկայացում տան և օգուտ վեր առնեն. կարծեմ տեղոյս բնակիչներն էլ փափագում են. դեկավար չկայ. և եթէ կայ էլ անուշադիր է:

Կարեկից.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

ԹԷՀՐԱՆ 2 մարտ 95

Գուցէ շատերը գիտեն, որ Թէհրանում կայ մի ակցիոներական ընկերութիւն, որ կոչվում է «Խնայողական»: Այդ ընկերութիւնը կազմւած է ոչ թէ գործաւորներից և այլն, այլ միայն բուրժուաներից: Ընկերութիւնն առաջադիմում է իր շահասիրական նպատակների մէջ, բանեցնում է փողը, մանաւանդ տոկոսով տալիս և այլն և այդպիսով նա կրում է բացարձակապէս վաճառականական բնաւորութիւն: Արդ, երեք տարուց ի վեր է, որ այդ ակցիոներական խումբը իր ժողովների նիստերը կայացնելու համար, անդատիժ կերպով հաւաքվում է եղել Հայկազեան դպրոցի ուսուցչական սենեակում: Շատ բնական կերպով, այդ ընթացքը մեզ խորթ թւեց և մենք իմաց տւինք ընկերութեան անդամներին ուրիշ տեղ ընտրել իրենց նիստերի համար: Մեզ ոչ-պաշտօնական կերպով պատասխանել էին որ դպրոցը իրենցն է և «ինչ որ ուզեն, կարող են անել այնտեղ». այդ տրամաբանութեամբ, նրանք կարող էին իրենց հարսանիքներն ու քէֆերն էլ գալ ուսումնարանի սենեակներում կատարել: Մենք կարևոր դատեցինք դրպրոցի դուռը փակել երբ դասերը դադարում են և այդպիսով բոլորովին արգելք դառնալ որ վաճառականական ժողովները կատարւին դպրոցի մէջ, ինչ անդամներից էլ որ բաղկացած լինէին այդպիսի ընկերութիւնները:

Դրանում մենք ղեկավարվում ենք այն սկզբունքով, որ հասարակական շէնքերի մէջ կարող են ժողովների համար թոյլտւութիւն լինել միմիայն հասարակական-ժողովրդական բնաւորութիւն կրող ընկերութիւնների. օրինակ. բարեգործական, դպրոցներին օժանդակող, ընթերցարանական և թատրոնական՝ ժողովների և ոչ թէ շահասիրական ու զուտ վաճառականական անձերից կազմված և նոյն տեսակ նպատակների ծառայող ընկերութիւնների:

Լսւած բան չէ, որ ուսուցչական սենեակը ծառայէ զանազան, փող տոկոսով տւող անձերից կազմւած՝ ընկերութեան ժողովատեղի: Կրկնում ենք, քանի մենք դպրոցումն ենք, ոչ մի այդպիսի ընկերութիւն չէ կարող ոտք դնել դպրոցում: Իսկ եթէ մեզնից բարձր մի իշխանութիւն, չը նայելով մեր ցոյց տւած առարկութիւններին, կը հրամայի որ մենք թոյլ տանք վաճառականների՝ ուսուցչական սենեակում ժողով կազմելու, այն ժամանակ մենք կը մտածենք թէ ինչ պիտի անել:

Թէհրանի Հայկազեան դպրոցի ուսուցիչներ՝

Վ. Փափազեանց
Միքայէլ Յ. Եղիազարեանց
Աւետիս Ապրեսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսի թերթերը հրատարակում են հետևեալ պաշտօնական զեկուցումը. «Բիթլիզի կուսակալ Թահսին փաշա պաշտօնանկ եղած է և անոր տեղ՝ Սասունի քննիչ Յանձնաժողովին անդամներէն Եօմէր բէյ փոխանորդաբար կարգուած է»:

—

Նոյն տեղից լրագիրները պաշտօնապէս գրում են, որ Թոքատի զինւորական ատեանի նախագահ Ֆէրիդ Մուստաֆա փաշան, մի ծածկագիր հեռագրով կայսերական պալատին հաղորդում է որ կառավարիչ փաշան և ընդհանուր դատախազի օգնականը խմբովին, գիշերվայ ժամը $1^1/_2$-ին մի հայոց թաղ գնալով «Թաքուր Աղասու միջոցաւ տան մը մէջ ձեռք անցուցին ամենայն ճարտարութեամբ «Հայ մասնախումբի» անձնանուէրներէն հինգ հոգի, որոնք միաձև հաղուստ էին կրում և ատրճանակով ու դաշոյնով զինուած էին: «Դատական պաշտօնեաները դրծը կը հետապնտեն»:

—

Կ. Պոլսի հայոց նոր պատրիարքը ամեն կողմից, ուր հայ կայ, ստանում է շնորհաւորութեան հեռագիրներ, իսկ Կ. Պոլսում նստող բոլոր ազգերի տեսչաններն և ազգապետները սիրալիր այցելութիւններ են անում նրան:

—

Ընտրուել են Կ. Պոլսում, Ազգ. Սահմանադրութեան օրէնքի համաձայն Կրօնական, Քաղաքական և այլ ժողովները: Հետաքրքիր է Ուսումնական խորհուրդի կազմութիւնը, որի մէջ երևում է «Հայրենիք» լրագրի զարգացած և աշխոյժ խմբագիրներից մէկը, իսկ Տնտեսական խորհուրդի մէջ էլ մի բանաստեղծ: Ա.ռ հասարակ երիդասարդներ են ընտրւել:

—

Մարաղայից մեզ գրում են հետևեալը. «Ամսիս 13-ին, ժամերգութեան միջոցին, եկեղեցւոյ մէջ, ուսուցիչ Յովնան Տէր-Վարդանեանը սկսում է փողոցային հայհոյանքներ տեղալ տիրացու Անանեանցի գլխին, սա էլ նրան և մեծ կռիւ է յառաջանում դրանից»: Այս անգամ տպում ենք պարոնի տւած լուրը, բայց այլ ևս մտադիր չենք թերթերի էջերը զբաղեցնել զանազան տիրացուների և տխմարների կռիւները նկարագրելով:

—

Ստացանք Բաֆֆիի «Պարոյր Հայկազն» (պրոյեկտիոս) գիրքը, արտատպած «Աղբիւրից» (և այդ չէ յիշւած իսկ): Գինն է 20 կոպէկ: Հասցէն նայել մեր յայտարարութիւնների մէջ:

—

Ռաշտից, Գերասիմ Մելիք-Ղարագօզեանը մի օրինակ «Շաւիղ» նւիրում է Ղարաբաղի Իւղավարդ գիւղի դպրոցին: Որդիք Բ. Արզումանեանցներն մի օրինակ «Շաւիղ» նւիրում են Նաղադի գիւղի նոր բացուելիք ուսումնարանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից յունվար 21-ից հեռագրում են որ Լերօսեան արքեպիսկոպոսը ընտրւած է յունաց տիեզերական պատրիարք՝ «Անտիմ VIII» տիտղոսով:

—Լօնդոնից հեռագրում են. Բուլղարիայի իշխան Ֆէրդինանտը պատրաստ է հրաժարւել գահից, յօգուտ իր Բորիս որդու:

—Ռուսաց գործակալութիւնը հեռագրում է հետևեալ ուրախալի հրովարտակի մասին, որ արձակել է Ռուսաց Կայսրը:

...«Մենք արդարացի գտանք իւրաքանչիւր տարի տալ պետական գանձարանից դրամական միջոցներ անհրաժեշտ օգնութիւն հասցնելու չքաւոր գիտնականներին, գրականագէտներին և հրապարակախօսներին, և նոյնպէս նրանց այրիներին և որբերին... տալով իւրաքանչիւր տարի պետական գանձարանից 50,000 ռուբլի: Ռուսաց գրականութեան արած այդ շնորհի համար, Օդեսայի ռուս թերթերը շնորհակալութեան ուղերձ են ուղղել Կայսեր:

—Գերմանական մի գործաւորական թերթ հրատարակեց մի գաղտնի շրջաբերականի պատճէն. այդ շրջաբերականը հրաւիրում է տեղական իշխանութիւններին շատ մօտից հսկել լեհացիների վրայ:

—Գերմանիայում մեռելի դիակը այրելու գործը առաջ է գնում շատ. մինչև այժմ մօտ 1500 հոգի բաժանորդ են գրվել, այսինքն երբ մեռնեն, ոչ թէ թաղւեն, այլ այրման ենթարկւեն: Այդ առողջապահական սովորութիւնը անշուշտ շատ շուտով պիտի տարածւի:

—Ցայտնի սոցիալիստ հրապարակախօս Ռոշֆորին թոյլ տրւեց Փարիզ մտնել: Զը տեսնւած ընդունելութիւն և ցոյցեր արին նրան. ամբողջ Փարիզը մասնակցում էր. ոչ մի ժամանակ Ռոշֆորին իր աքսորից վերադառնալիս այսքան մեծ ցոյց չեն արել. այժմեան ցոյցը ընդհանուր, հասարակական բնաւորութիւն ունէր: Այժմ նա վերադառնում էր աքսորանքից որպէս ընդհանուր հռչակ ունեցող մի հրապարակախօս, որին աքսորի մէջ էին պահում վրէժխնդրութիւնից: Նա իր աքսորի մէջ անդամ գրում էր և խիստ խայթում իր թշնամիներին: Երբ Ռոշֆորը Փարիզ մտաւ, փողոցներում ասեղ ձգելու տեղ չը կար, կառքերի և ձիաքարշների երթևեկութիւնը դադարել էր. հարիւրաւոր ձեռքեր էին մեկնվում դէպի նա և կէսցէները թնդացնում էին օդը:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մեր թերթի ծաւալը մեզ թոյլ չէ տալիս այս անգամ ստացւած «Մշակից» մի քանի լաւ յօդւածներ արտատպելը: Այդպիսի յօդւածներից մէկն է № 11-ում տպւած «Երկու ծայրեր» գրուածքը:

Մի քանի ժամանակ առաջ, Օդեսայի մի լրագիր իր համարներից մէկում հրաւէր կարդաց քաղաքի հասարակութեան մի ինչ որ ռուս այրի կնոջ թըշւառ դրութեանը օգնելու: Նրա գործածած բառերն են եղել. «օգնեցէք, բարի քաղաքացիք, խեղճ անտէր այրիին»:

Եւ ահա նոյն իսկ հետևեալ օրը խմբագրութեան մէջ է լցւել 1100 ռուբլու նուէրներ և 12 ժամւայ ընթացքում այրիի տունը դարձել է մի ուխտատեղի: «Հարիւրաւոր մարդիկ, աշակերտներ, երիտասարդներ, կանայք, ամենքի ձեռին մի կապոց—մտնում ու դուրս են գալիս մոռացված այրիի սենեակը, թողնելով այնտեղ և' գլուխներով շաքար և' թէյ և' հագուստեղէն, երեխաների համար կօշիկներ, նոյն իսկ պատուհանի համար վարագոյրներ...»

Թերթի երկրորդ համարը հաշիւ էր տալիս որ երկու օրւայ մէջ այրիին եղած նուէրի գումարը հասել է 2000 ռուբլու. հինգ օրւայ մէջ 3000 ռուբլու և դեռ էլի շարունակվում է»

Տեսնելով այդ բոլորը, ասում է ամենայն իրաւամբ յօդւածագիրը, «մարդ իրեն զգում է կենդանի մարդկանց մէջ» և երբ այդ համեմատում է հայրենի Կովկասի հայերի հետ, ուր լրա-

գիրները օրն ի բուն հրաւէր կարդալով փող են մուրում և երկու տարուայ ընթացքում տասնեակ հազարներ էլ չեն կարողանում ժողովել կոտրուող, հարիւրներով թշուառացած եղբայրների համար...»

Եւ երբ մարդ համեմատում է այդ պարսկահայերի հետ, ուր գոչում են «տուէք գոնէ մի քանի կոպէկ ձեր քաղցից մեռնող հազարաւոր եղբայրների համար» և նա երես է դարձնում, նա «իր առօրեայ հոգսերով (կեղտոտութիւններով) զբաղուած՝ չէ կամենում մի րոպէ կանգ առնել իր շուրջը կատարուող տեսարանների առաջ...»

«Ողորմեցէք, պարսկահայեր, ողորմեցէք ձեր հազարներով սովի մէջ տառապող եղբայրներին...» գոռում են անդադար թերթերը։

Եւ հայը տալիս է, երբեմն միայն, բայց այնպիսի պայմաններով, որոնցից երեքը միայն թւում է «Մշակի» յօդուածագիրը. այն է 1) որ նրա ջիբից ուրիշները դուրս քաշեն. 2) որ դուրս քաշողները երեք հոգուց պակաս չը լինեն և այն էլ «գիրքով» (այսինքն «աղա») մարդիկ և 3) որ այդ առիթով գոնէ մի առաջնորդողէլ է լոյս տեսնի թերթերից մէկում»...

Մոռացել է չորրորդն էս, այսինքն որ 4) այդ փողերի տնօրինելը, բաժանելը և այլն իրեն յանձնեն, որպէս զի կամ մի առ ժամանակ բանեցնելով տոկոսիցը օգտի և կամ թէ կէսը ուտի։

Վերջացնելով յօդուածը, յօդուածագիր պ. Մարտիրոս Մարգարեանը հարց է տալիս թէ ինչ է պատճառը, որ ռուս այրիին հասած նուէրների մէջ մի հայի կոպէկը չը կար. միթէ հայը այդքան թթու ազգասէր է։ Ոչ, պատճառը այն է, որ «ոչ ոք չ'եկաւ նրա գրասենեակը և խանութը և չը խնդրեց, չ'աղաչեց և այլն»։

Անցեալ օրերն էր, որ մի հասարակական հիմնարկութեան համար պարսկահայ քաղաքներից մէկում շատ հայ հարուստներ գումարներ ստորագրեցին. այժմ ահա անցել է օրը և շատերը փողը չեն կամենում տալ, որովհետև կամենում են որ ֆոնդի նպատակով հաւաքուած փողը իրենց մօտ պահուի, որ իրենց քէֆի պէս ծախսուի. մէկն էլ մինչև իսկ պայման է դրել, որ եթէ այս ինչ պաշտօնեան հանեն հիմնարկութիւնից, այն ժամանակ միայն իր ստորագրածը կը տայ։

Մի ուրիշ օրինակ։ Մօտ օրերս Թէհրան է հասնում Սպահանից մի վարդապետ։ Մի քանի անձեր երեք օրուայ ընթացքում հաւաքել են 200 թուման՝ որ դրանով հիւրասիրեն հայը սուրբին։ Մինչ հեռաւոր, սովից կոտրուող եղբայրները ոչ մի կոպէկ չը կարողացան մուրալ այս «ջերմեռանդ-կրօնասէր» հասարակութիւնից, մինչդեռ Թէհրանի դպրոցը մի կոպէկ չը կարողացաւ մուրալ իր վարժապետներին քաղցած չը թողնելու համար...

Չէ, թշուառ չէ Թէհրանը, եթէ նրա մէջ գտնուող հայերը այսքան «բարեպաշտ» են։

*** «Մշակի» նոյն համարում կայ մի ուրիշ յօդուած, որ նոր բան չէ ասում բայց լաւ ժամանակին է ասում։

Եկեղեցւոյ երեցփոխանների համար է խօսում նա և եկեղեցիների գումարների սրա—նրա կոկորդը լցուելու մասին. «իսկ հոգևոր կառավարութիւնը—ասում է նա—ինչպես միշտ և մանաւանդ այդ պիսի հանգամանքներում, երբ մեր դպրոցները եկեղեցական գումարներով միայն պէտք է պահուեն, տեսնում է այդ և Զաքարիայի լռութիւն է պահպանում...»

Ամէն տեղ նոյնն է. հոգևոր կառավարութիւնից, հայերի մէջ, դրանից աւելին սպասել չէ կարելի. կամ պիտի սխալ գործի, յառաջադիմութեան խոչընդոտ դառնայ և կամ լռի և թողնի որ պաշտօնեաները գրփեն, գչլեն ժողովրդին ծծեն նրա հիւթը, ուռճանան նրանով և հասարակական հիմնարկութիւնները տակն ու վրայ անեն։

*** Ահա դրա օրինակ Երևանի թեմի վերատեսուչ Բենիկ աբեղայի ոտնձգութիւնները։ Այդ եպիտը հրատարակել է մի շրջաբերական, որի ամբողջ ոգու համաձայն, պէտք է կրթական բոլոր հիմնարկութիւնները կախումն ունենալով միայն հոգևոր վարչութիւնից, հոգաբարձութիւնը իբր աւելորդ մի բան, հէնց այնպէս մի տիկնիկ (poupée) գործածել, այսինք, ինչպէս ասում է «Նոր-Դարի» երկու երեսը բռնող կանոնագրութիւնը—«Հոգաբարձութիւնը իրաւունք ունի խորհրդակցելու (միայն և ոչ աւելի), մեղմօրէն յայտնելու իր նկատողութիւնները և գրելու առ թեմական տեսուչն»—որը կրօնաւոր է։

Միջին դարը նորոգվում է մեր մէջ։

Ս. Ֆ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լօնդոն. 9 մարտ. (Ն. Տ.) Երեկ գիշեր Կոմունների սալատում եղած վիճաբանութեան մէջ, նկատելէ որ անգլ. կառավարութիւնը պէտք է շուտով միջոցներ ձեռք առնի Զանզիբարում շարունակուող գերեվաճառութիւնը ոչընչացնելու համար։ Պիմբան պատասխանելով Սըր Հարքուրթի հարցին նկատեց որ Կիպրոսը բոլորովին անպէտք է ներկայանում ամեն կողմով Անգլիային, բայց Անգղիան ընդունած լինելով պատասխանատուութիւն իւր վրայ ըստ դաշնագրութեան՝ որ տեղի է ունեցել Անգղիոյ և տաճկաստանի մէջ, Մեծն Բրիտանիան ինչով որ կարող է պիտի օգնէ Կիպրոսին, չը նայելով որ դա պիտի ծանր նստի իրեն։ Ստացած լուրերից երևում է որ ժապոնական զօրքը գրաւեց Ինկո չինացիք փախան Թինչանգ թէյ, առաջին կռուից իսկ յետոյ։ Ժապոնական ա. և բ. բանակները միացան Ինկոում։

Ինկո. 10 մարտ. Ժապոնացիք գրաւեցին Ինկոի եզերքում գտնուող ծովային ամրութիւնները։ Մարտ 9-ի առաւօտը ժապոնական զօրքը յարձակուեց Թինկչանգ-թէյի վրայ, ուր ապաստանել էին Ինկոից փախած չինացիք։ Կատաղի կռիւ տեղի ունեցաւ, որ տևեց 3 ժամ. չինացիք կորցրին 2000 հոգի, իսկ ժապոնացիք 96։ «Times» հրատարակում է հեռագիրներ իր Հռովմի աշխատակցից որ յայտնում է թէ Ֆրանսիան զինելով Աբիսինիային, շատ վտանգաւոր հետևանքներ պատրաստեց թէ իր և թէ ամբողջ Եւրոպայի համար։

Լօնդոն. 11 մարտ. Մանչուրիայում ժապոնական պահակները պաշտպանում են օտարականների։ Ժապոնեան պահանջեց Չինաստանից որ Լեհունգ-չանգի ժապոն մտնելը մի շաբաթով յետաձգի։

Ըրատնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

94 թուից Դավրէժում կազմուած է «Ընթերցասիրաց» գրադարանական ընկերութիւն, որի նպատակն է ժողովրդական գրադարաններ բանալ Ատրպատականում։ Ընկերութիւնը սորանով դիմում է յարգելի հեղինակներին, հրատարակիչներին և նուիրատուներին, որ բարեհաճեն յօգուտ ընկերութեան տրուելիք նիւթական և այլ նուէրներն ուղարկել «Շաւիղի» խմբագրութեան։

Դավրէժում մեր հասցէն է՝
Cabinet de lecture populaire
1—2

ՐԱՖՖԻ
ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ
Գինն է 20 կոպ.
Դիմել Թիֆլիս Կովկասեան գրավաճառանոցին և կամ հեղինակի այրին։
Tiflis. Anna Raffi. 1—3

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՀԱՅ
ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ
Ծախվում են խմբագրութեանս մէջ
Գինն է Թէհրանում վեց ղրան իսկ Պարսկաստանի օտար քաղաքների համար 8 ղրան

ՀԱՅՐԵՆԻՔ
ՕՐԱԹԵՐԹ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է Կ. ՊՕԼՍՈՒՄ
Տարեկան բաժանորդագինն է օտար երկիրների համար 25 ֆրանկ.
Հասցէն՝ Rédaction «HAIRÉNIK» Galata, ancien local de la Banque Imp. Ottomane.
Constantinople (Turquie

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ
Հրատարակութիւն «Մշակի» խմբագրութեան
Գինն է 20 ԿՈՊԷԿ
Դիմել. Tiflis, Rédaction «Mschak»

„ՏԱՐԱԶ"
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է՝ 6 ռուբլի, արտասահմանից 10 ռուբլի։
Հասցէ. Tiflis; Rédaction du journal «TARAZ»

„ԱՂԲԻՒՐ"
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է՝ 3 ռ. արտասահմանից 4 ռուբլի։
Հասցէն՝ Tiflis, Rédaction de la Revue «AGBUR».

„L'ARMENIE"
JOURNAL POLITIQUE ET LITTÉRAIRE
Paraissant le 1re. de chaque mois à Londres.
Prix d'abonnement 18 fr. 75.
Adresse. Rédaction de «L'Arménie»
33 De Vere Gardens. 33
Londres. W.

"ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻԶՈՒՄ
Տարեկան բաժանորդագինն է 10 ռ. կէս տարուանը 6 ռ.
Դուրս է գալիս շաբաթը 3 անգամ. հասցէ. Tiflis (Russie) Rédaction «MSCHAK».

„ՄՈՒՐՃ"
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
Հրատ. Թիֆլիզում
Տարեկան բաժանորդ. 10 ռ.
Հասցէ Rédaction «MOURTCH» Tiflis (Russie)
Ուսումնարանների և աշակերտների համար՝ 8 ռ.